**Նոտարական ակտի կոդ:** 763-20180329-117-2373971
**Նոտարական ակտի գաղտնագիր:** QS5172

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
14.09.2012 ԹՎԱԿԱՆԻՆ ԹԻՎ 5543 ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ
«ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

երկու հազար տասնութ թվականի մարտի քսանիննը
քաղաք Վանաձոր

Մենք՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿԻ համայնքն ի դեմ համայնքի ղեկավար՝ **ԳԱԳԻԿ ՀԵՆՐԻԿԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ**, ծնված՝27/07/1965թ-ին, ՀԾՀ՝ 3707650340, անձնագիր՝ AH0682528, տրված՝ 052-ի կողմից, 21/10/2008թ-ին, հաշվառված՝ ԼՈՌԻ, ՍՊԻՏԱԿ, ՈՒԶԲԵԿԱԿԱՆ Կ-5, 4 Տ, որի անունից համաձայն թիվ 034/06-339 լիազորագրի հաստատված երկու հազար տասնութ թվականի մարտի քսանյոթին հանդես է գալիս՝ **ՆՈՐԱՅՐ ՎԱՐՈՒԺԱՆԻ ՅԱՐՄԱԼՈՅԱՆԸ**, ծնված՝ 02/07/1985թ-ին, ՀԾՀ՝ 1207850055, անձնագիր՝ AR0343783, տրված՝ 052-ի կողմից, 26/06/2017թ-ին, հաշվառված՝ ԼՈՌԻ, ՍՊԻՏԱԿ, Կ-2 Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ Փ., 17 Շ, 3ԲՆ, հետագայում «Վարձատու», ղեկավարվելով Սպիտակի համայնքի ղեկավարի 23.01.2018թ. /երկու հազար տասնութ թվականի հունվարի քսաներեքին/ թիվ 33 որոշմամբ, և «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ» ՀԻՄՆԱՐԿ, հասցե՝ Երևան Կառավարական տուն / 3, գրանցման համար՝ 286.180.05321, ՀՎՀՀ՝ 01506515, ի դեմ աշխատակազմի ղեկավար՝ **ԱՐՏԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ**, ծնված՝ 30/10/1967, ՀԾՀ՝ 1704590132, անձնագիր՝ AM0389543, տրված՝ 043-ի կողմից 25/07/2011թ-ին, հաշվարված՝ ՄԱՐՏՈՒՆԻ ԱՍՏՂԱՁՈՐ 4 ՓՈՂ. / 16, որը գործում է ՛՛Պետական կառավարչական հիմնարկների մասին՛՛ Հայաստանի Հանրապետության օրենքի և Նախարարության կանոնադրության հիման վրա, որի անունից համաձայն թիվ 3 լիազորագրի հաստատված՝26.01.2018թ./երկու հազար տասնութ թվականի հունվարի քսանվեցին/ հանդես է գալիս՝ Նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության Սպիտակի զբաղվածության տարածքային կենտրոնի տնօրեն՝ **ԳԱԳԻԿ ՎՐՈՒՅՐԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԸ**, ծնված՝ 30/08/1960թ-ին, ՀԾՀ՝ 4008600396, անձնագիր՝ AM0383419, տրված՝ 052-ի կողմից, 20/07/2011թ-ին, հաշվառված՝ ԼՈՌԻ, ՍՊԻՏԱԿ, ՈՒԶԲԵԿԱԿԱՆ ԹՂՄ., 5 Շ, 11-2ԲՆ, հետագայում՝ «Վարձակալ»

ԿՆՔԵՑԻՆՔ ՍՈՒՅՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՄԱՍԻՆ

1. Վանաձոր նոտարական տարածքի նոտար Մամիկոն Ասլանյանի կողմից 14.09.2012թ./երկու հազար տասներկու թվականի սեպտեմբերի տասնչորսին/ թիվ 5543 գրանցամատյանի համարի տակ վավերացված Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, քաղաք Սպիտակ, Շահումյան փողոց, թիվ 7/յոթ/ հասցեում գտնվող անշարժ գույքի /ոչ բնակելի տարածքի/ վարձակալության պայմանագրի 1.2 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
՛՛Սույն պայմանագիրը գործում է մինչև 31.12.2028թ./երկու հազար քսանութ թվականի դեկտեմբերի երեսունմեկը/ ներառյալ, որպես գրասենյակ օգտագործելու նպատակով՛՛:
2.Անշարժ գույքն ազատ է երրորդ անձանց իրավունքներից /այլ անձանց վաճառված, նվիրված կամ գրավ դրված չէ, արգելանքի տակ չի գտնվում/, ինչը հաստատված է ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի համապատասխան տարածքային ստորաբաժանման կողմից 28.03.2018թ./երկու հազար տասնութ թվականի մարտի քսանութին/ տրված անշարժ գույքի միավորի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ ՄՏ-28032018-06-0134 տեղեկանքով:
3.՛՛Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման մասին՛՛ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 624 հոդվածի 2-րդ կետով կողմերս համաձայն ենք, որ Վանաձոր նոտարական տարածքի նոտար Մամիկոն Ասլանյանի կողմից 14.09.2012թ./երկու հազար տասներկու թվականի սեպտեմբերի տասնչորսին/ թիվ 5543 գրանցամատյանի համարի տակ վավերացված անշարժ գույքի /ոչ բնակելի տարածքի/ վարձակալության պայմանագիրը վերսկսվի, շարունակվելով գործել 10/տասը/ տարի ժամանակով:
4. Սույն համաձայնագրի գործողությունը տարածվում է 01.01.2018թ./երկու հազար տասնութ թվականի հունվարի մեկը/:

5. Սույն համաձայնագիրը կնքելու, ձևակերպելու և գրանցելու հետ կապված ծախսերը կատարվելու է «Վարձակալ» - ի կողմից:
6. Սույն համաձայնագիրը կնքված է չորս միևնույն իրավաբանական ուժն ունեցող օրինակներից, որոնցից մեկը պահվում է «Վանաձոր» նոտարական տարածքի նոտարի գործերում, իսկ մյուս օրինակները տրվում են «ԿՈՂՄԵՐԻՆ»:
7. Համաձայնագիրը կարող է դադարեցվել նախապես մեկ ամիս առաջ գրավոր ծանուցելով մյուս կողմին:
8. Համաձայնագիրն ընթերցվեց բարձրաձայն նոտարի կողմից և պարզաբանվեցին օրենսդրությամբ գործող նորմերը:
9. Սույն համաձայնագիրը ենթակա է պետական գրանցման՝ ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում 30 աշխատանքային օրվա ընթացքում:

«ՎԱՐՁԱՏՈՒ»
Սպիտակի համայնք
ք. Սպիտակ, Շահումյան 7
ՀՎՀՀ 06801433
Հ/Հ 900245161154 Սպիտակի ՏԳԲ
ՍՊԻՏԱԿԻ համայնքի ղեկավար՝ **ԳԱԳԻԿ ՀԵՆՐԻԿԻ ՍԱՀԱԿՅԱՆ**, որի անունից հանդես է գալիս՝

**ՆՈՐԱՅՐ ՎԱՐՈՒԺԱՆԻ ՅԱՐՄԱԼՈՅԱՆԸ** Նորայր Վարուժանի Յարմալոյան

«ՎԱՐՁԱԿԱԼ»
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ» ՀԻՄՆԱՐԿ, աշխատակազմի ղեկավար՝ **ԱՐՏԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ**, որի անունից հանդես է գալիս՝ Նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության Սպիտակի զբաղվածության տարածքային կենտրոնի տնօրեն՝

**ԳԱԳԻԿ ՎՐՈՒՅՐԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԸ**

երկու հազար տասնութ թվականի մարտի քսանինը
Սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ Վանաձորի նոտարական տարածքի նոտար ՌՈԶԱ ԲԵԿՉՅԱՆԻՍ, կողմից: Կողմերը համաձայնագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Կողմերի, նրանց ներկայացուցիչների ինքնությունը, նրանց գործունակությունը, ինչպես նաև անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ստուգված են: Իմ կողմից վավերացված սույն համաձայնագիրն ունի օրենքով նախատեսված հանրային հեղինակություն և լիարժեք ապացուցողական ուժ:

Գրանցված է սեղանամատյանում N 1113

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասներկու հազար ՀՀ դրամ ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Ռոզա Սեյրանի Բեկչյան